3238

Дрицшстер

891.99 U
Ц-64

891.99ս
Ի-64
438

ԽՆԿՈ ԱՊԵՐ

ԹԻԽԱՄԵՐԸ

891.99ԼՏ
Ի-64

Հեղափոխ. Մեսրոպ Հիբերյան

ՊԵՏՀՐԱՏ [1929] ՅԵՐԵՎԱՆ

20595

ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՀՍԽՀ ԼԺԿ ՍՈՑԴԱՍԳԼԽՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԻՑ ԳՈՐԾՈՂ ՄԱՆԿԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՄԲ № 32

7559-53

Պետհրատ № 854 Գրառնպվար № 1039 թ. տիրաժ 4000
Վիմագրատուն Հայպոլիգրաֆի 2-րդ տպ. պատ. № 46

ԹԽԱՄԵՐԸ

1

Սար ու սարալանջ,
Անտառը կանաչ.
Անտառի առաջ՝
Լայն դաշտ ու արոտ,
Դաշտում գյուղի մոտ
Քչքչան տավակ,

Տավափին՝ լայն բակ,
Բակում՝ մի տնակ,
Տնակում՝ նեղ հաշտ,
Հաշտում՝ կավե տաշտ,
Տաշտում՝ մայր Թխսկան,
Թխսի տակ՝ եսքան,
Քսան ընտիր ձու,
Քսան ճուտացու։

Տան տատը՝ Մարթան,
Թոռնիկը՝ Վարդան։

2

Թուխսը տաշտում
Նստեց շատ, շատ,
Վոչ ավելի,
Յերեք շաբաթ։
Վարդան, Մարթան
Յեկան տեսան,
Զրկա տաշտում
Ել ձու քսան.
Քսան ձվից
Քսան ճուտիկ,
Կարմրաքթիկ,
Դեղնատոտիկ։

3

Քսան ծիկո,
Ծիվ-ծիվ, ծիկ, ծիկ,
Կայծիկ, պեծիկ,
Դեղին կծիկ
Կլոր,
Գլոր, —

Պոկ չեն գալիս իրենց մորից,
Վազվզում են մոր յետևից
Ճաշ գտնելու,
Ջուր խմելու։
Մայրը՝ ջոու, ջոու.
Ճիճու, ճիճու,
Նրանք՝ ճրտ, ճրտ,
Նրանք՝ կրտ, կրտ—

Լցնում քուչիկ,
Անում փուչիկ
Յեվ կուչ ու ծիգ
Կում, կում անում առվակից,
Ընկնում մորը քամակից։

4

Ես գիշատիչ,
Ես հսկա
Զար ուրուրը ճուտփախուկ,
Հանկարծ ճուտերի վրա
Վերից, ինչպես քար կախուկ,
Նետվեց ցած։
Դե դու կաց։

5

Հարձակվեցին
Մայր կռիան,
Լուսամուտից
Թոռ Վարդան,
Ասլան կատուն
Տան անդամ,

Մարկիզ շունը
Պահնորդ տան

Համ, ուրուրի սուր պոչից.
Բա Մարթայի ձեն ու ճիչ.
Բռնեք, տվեք եղ գողին,
Բակից ճուտեր տանողին։

Ուրուրը բակին
Թողեց ճուտիկին,
Հասավ կոմանին,
Դիպավ Վարդանին,
Թռավ տակառին,
Տակառից ծառին,
Ծառից կտուրը,
Կտրից փեռուրը
Թափած գող հյուրը՝
Ինպես պոչատ,
Պոչից անջատ,
Լեղապատառ
Ընկավ անտառ.
Թե չբատակեց,
Սիրտը ճաքեց։



7

Ապրես, կոթան,
Ապրեք, Մարկիզ, Ասան, Վարդան։
Տան մեծ անդամ
Տատիկ Մարթան
Են ուրուրի կրծքից թափված
Բակի միջին դես-դեն ցրված
Բմբուլները հատ-հատ գանձեց,
Իր բարձն ածեց
Ու ծիծաղեց.
—Մեր հյուրն անկոչ
Պոչով յեկավ,
Գնաց անպոչ։

8

Ելի թուխաը՝
Կուրծքը բամբակ՝
Իր շուրջն առած
Իր ճուտ խմբակ.
Ման ե ածում
Նրան բակում,
Քշուշ անում,
Ճիճու ճանկում.
Մի-մի խոտիկ,
Մի-մի հատիկ,
Ճըտ-ճըտ, կըտ-կըտ,
Կեր, իմ ճուտիկ։

9

Հետո առած
Թևերի տակ,
Իր ճուտերին ծվարում ե.
Արևմուտին վաղ քնում ե։
—Փումփուլավո՛ր, բարի գիշեր,
Զար ուրուրից զգուշացիր։



7

Ապրես, կռթան,
Ապրեք, Մարկիզ, Ալան, Վարդան։
Տան մեծ անդամ
Տատիկ Մարթան
Են ուրուրի կրծքից թափված
Բակի միջին դես-դեն ցրված
Բմբուլները հատ-հատ գանձեց,
Իր բարձն ածեց
Ու ծիծաղեց.
—Մեր հյուրն անկոչ
Պոչով յեկավ,
Գնաց անպոչ։

8

Ելի թուխսը՝
Կուրծքը բամբակ՝
Իր շուրջն առած
Իր ճուտ խմբակ.
Ման է ածում
Նրան բակում,
Քշուշ անում,
Ճիճու ճանկում.
Մի-մի խոտիկ,
Մի-մի հատիկ,
Ճըտ-ճըտ, կըտ-կըտ,
Կեր, իմ ճուտիկ։

9

Հեռու առած
Թևերի տակ,
Իր ճուտերին ծվարում է.
Արևմուտին վաղ քնում է։
—Փումփուլավո՛ր, բարի գիշեր,
Զար ուրուրից զգուշացիր։

ՀԷՐՔ

ՀՍՍՀ ԳԱ ԳՐԱԴԱՐԱՆ

ԳԻՆԸ՝ 35 ԿՈՊ.

3238

0007573

2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0007573